

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ֆ. Կ. ԿՈՆԵԲԵՐ (G. C. Conybeare), պրոֆեսոր Օկսֆորդի համալսարանի. Մի բաղդատութիւն Արիստոտելի Ստորոգութեանց և Մեկնութեանց, յաղագս Աշխարհի, յաղագս Առաքինութեանց և Մոլութեանց և Պորփիրի ներածութեան յունարէն բնագիրներին — հին հայերէն թարգմանութիւններին հետ:

«Մուրճ»-ի պատուարածան ընթերցողները չեն մոռացել անտարակոյս որ սեպտեմբեր ամսին Լոնդոնում կալացած Արևալագէտների համաժողովում ես առաջարկեցի մի «Համագլխին ընկերութիւն» կազմել հակական ուսումների առաջացման համար (pour l'avancement des études arméniennes). Յատկապէս ջանացի մատնացողք անել աչն օգուտը, որը համանման հելլենական ընկերութիւնները ալսալիսով կարող կը լինէին ստանալ հալագէտների աշխատակցութիւնից՝ թէ ընախօսութեան թէ պատմութեան և թէ ընագիրների քննութեան տեսակէտներից: Ան ժամանակ լալտած փախագս արդէն սկսւում է իրագործել Anecdota Oxoniensia կոչւած շարքումը մի շարք հատորի հրատարակութեամբ ¹⁾:

Այդ ժողովածուն՝ տպւած Օկսֆորդի համալսարանի ծախքով և նրա խնկ տպարանում, պարունակում է իւր մէջ ընագրեր, դոկումենտներ և քաղւածքներ, հանւած գլխաւորապէս դեռ անտիպ ձեռագրերից որոնք պահպանւել մնացել են Օկսֆորդի Բոդլէ'եան գրադարանում (Bodleian Library), — բաժանւած մի քանի սերիաների՝ կլասսիկականի, սեմիթականի, արիականի և մի չորրորդի, որը վերաբերում է միջին դարերին և նորագոյն ժամանակներին: Արդ՝ կլասսիկականի բաժնում է (հատոր I, մաս վեցերորդ) որ լոյս է տեսել աչն աշխատութիւնը որը մեզ հետաքրքրում է և որի ամբողջ վերնագիրը հետեւեալն է.

Հալագէտ պրոֆեսորը իւր ֆրանսերէն գրած ներկալ լօղւածի սկիզբը, ալսինքն մինչև ալս տեղը — ինքն է գրել հայերէն: Մ. Խ.

¹⁾ Անհետաքրքրական չէ իմանալ մեր ընթերցողներին որ լարդելի

„A Collation with the ancient Armenian versions of the Greek text of Aristotele's Categories, De Interpretatione, De Mundo, De Virtutibus et Vitiis and of Porphyry's Introduction, by Frederick Cornwallis Conybeare, U. A. Late fellow and Praelector of University College, Oxford, at the Clarendon Press, 1892 ¹⁾». քառածալ, էջ XL և 184, մի ֆակսիմիլով (fac simile) Պաւիա քաղաքում գտնուող ձեռագրից»:

Գիրքը ներկած է պ. Արզար Յովհաննիսեանին Թիֆլիսից և հալը Գարեգինին Ս. Ղազարում, Հեղինակը, պ. Կոնիքիւրը, որի մասին ես խօսել եմ լիակատար կերպով իմ «Հակաբանութիւնը Եւրոպայում» աշխատութեան մէջ, որը տպագրութեան ընթացքի մէջ է «Մուրճ»-ում, — այնքան քաջ լատնի է հալ գիտնականներին, որ ես ալտեղ չեմ մտնելու կենսագրական մանրամասնութիւնների մէջ նրա վերաբերեալ, Գիտնականի վիշալ աշխատութիւնը ինչպէս որ ալք երևում է վերնագրից մի բաղդատութիւն է Արիստոտելի և կամ սրան վերագրած բազմաթիւ

¹⁾ Մի բաղդատութիւն հակական հին թարգմանութիւնների լուսական բնագրերի հետ—Արիստոտելի ստորագրութիւնների, մեկնութիւնների, Աշխարհի, Առաքինութիւնների և Մուլութիւնների և Պորփիրի ներածութեան—աշխատասիրեց Ֆրեդերիկ Կոռնալիս Կոնիքիւր, նախկին ուսանող և պրոֆեսոր Օկսֆորդի համալսարանի, Կրարենդոնի տպարան, 1892:

գրւածների հակական հին թարգմանութիւնների, ալսինքն 1) Ստորագրութիւնները (հրատարակութիւն Waitz'), 2) Մեկնութիւնների մասին (հրատարակութիւն Նոյնի), 3) Աշխարհի մասին (հրատարակութիւն Բեկկերի—Բերլինում.), 4) Առաքինութիւնների և Մուլութիւնների մասին (հրատարակութիւն Նոյնի) և 5) Պորփիրի ներածութիւնը ստորագրութեանց (հրատարակութիւն Ադուֆ Բուսաէ):

Ստորագրութիւնների և Մեկնութիւնների բաղդատութիւնը բռնել է էջ 1—50. և Waitz'ի լուսարէն բնագրի հետ ալսպիսով բաղդատող հալ թարգմանութեան բնագիրը—հիմնած է Սուրբ Ղազարի բնագրի վրալ հրատարակած 1833 թւին Կորինի, Մամբրէի և Դաւիթ Անլաղթի գրւածքներում (Ստորագրութիւններ էջ 339—408), Նոյնը բացատրութիւնների հետ էջ 409—458, մեկնութիւնները էջ 461—486, իւր կողմից հիմնած երեք ձեռագրերի վրալ, Միսիթարեանների գրադարանից, որպէս նաև Ազգային գրադարանի և Նրոսաղէմի պատրիարքարանի լաւագոյն ձեռագրերի վրալ Պ. Կոնիքիւրը մեղ հաւատացնում է որ Էջմիածնի ձեռագրերը ոչինչ նոր բան չեն աւելացնում Դժբախտաբար նա արդէն տպել էր տեւ իւր բաղդատութիւնը, երբոր մի ուրիշ ձեռագիր գտաւ Խալիպի Պաւիա քաղաքի համալսարանի գրադարանում, Այս ձեռագիրը երկու հատորի մէջ, թւագրւած D 42, 43, և գրւած բամբակեալ հաստ և շատ սպիտակ թղթի վրալ, թերևս ընդօրինակած լինի

1100 և 1300 թվականների միջեր-
քում, բայց կազմը պատկանում է
XV դարուն: Յաջորդ դարի սկզբում
աղբ ձեռագիրը պատկանում է եղել
Պեռո դի Բեկարիզի (Pero di Becca-
risi),—Պաւլիացի մի աղնականին,
խակ քիչ փետու նշանաւոր արեւելագէտ
Թէդէ Ամբրոսազ'ին կամ Ամբրոզիո'ին՝
Ալքանեան դքսերի գերդաստանից,—
որ հեղինակ է մի ներածութեան քաղ-
ղէական, ասորական, հայկական և ավ
լեզուների, Պաւլիա, 1539, որի մէջ նա
օրինակներ է քաղում ավ իսկ ձեռա-
գրից: Անուհետեւ այս ձեռագիրը անց-
նում է Պաւլիայի համալսարանը, ուր
ալժմս էլ նա պահւում է: Ահա դրա
բովանդակութիւնը: Հատոր I. 1)
Բոլսերի լոնական անուների մի
ցանկ, գրած հալեբէն տառերով:
դրանց համապատասխանող հայկա-
կան ժողովրդական անունների հետ,
2) Փիլոսոփ բառարանը Հին կտա-
կարանի լատուկ անունների, 3) Յա-
ղադոս աշխարհի (ոչ կատա-
րեալ) և չաղադոս առաքինութեանց,
4) Պորփուրի ներա-
ծութիւնը, 5) Դաւթի բացա-
տրութիւնը ավ ներածութեան մա-
սին, 6) Մի բացատրութիւն ստորո-
գութիւնների մասին (ոչ կատա-
րեալ), 7) Մի թարգմանութիւն Եւ-
կլիդեսի սկզբի, պատկերներով հան-
չերձ: Հատոր II, Ստորագութիւնք
և չաղադոս մեկնութեանց:

Արդ՝ երկրորդ հատորն է աւելի
կարեւորը, որովհետեւ դրա բնագիրը
շատ մաքուր է, ալսինքն զերծ մի-
ջին դարերի ընդօրինակողների բաղ-
մաթիւ սխալներից որ և հասցւում է
մեզ ալսպիսով հինգերորդ դարուն:

Ալսպիսով պ. Կոնիբիրը ստիպ-
ւած է եղել նորից աչքի անցնելու
իւր բաղդաստութիւնը Պաւլիայի ձե-
ռագրի հետ և ապել չաւելածներ
էջ 89—106 ստորագութիւնների և
մեկնութիւնների համար: Մի երկ-
րորդ չաւելածում նա մէջ է բերել
նաեւ դոցա բնագիրը—աւելացնելով
երբեմն սուրը Դաղարի (Վենետիկ)
բնագրի վարիանտները, երբեմն էլ
Նրուսաղէմի և Պարիզի ձեռագրերինը
(ստորագութիւններ էջ 107—183):
Պր. Կոնիբիրը նշմարել է տալիս, որ
կէտագրութիւնը շատ խնամքով է
կատարւած, թէև ուղղագրութիւնը
բոլոր տեղերում միեմտն է: Դեպոս-
գրութիւնը նշանակւած է խնամքով.
բայց եւ համամիտ չեմ հալագէտ գիտ-
նականի կարծիքին, որ իբր թէ ալս
դէպքում մենք մի լեզւաբանական
գիւտ ունինք անելու հին հայկական
չեչտի նշանակութեան վերաբերեալ:
Եւ իրաւ, հայկական բուժը և զծից
բարձր դրած ստորակէտի նման ա-
պաթարցը (ապոստրոֆ), (օրինակի
համար՝ Գոլ'առ) ցոյց է տալիս ձե-
ռագրի մէջ միմիայն որ պէտք է
քիչ կանգ առնել,—մինչդեռ չեչտը
նշանակում է ալն բառերը, որ հար-
կաւոր է բաձրացնել ձալնի չեչտով
և մասնաւորապէս թւում է ընդօրի-
նակութիւն լինել չեչտ-որոնները
նշանակելու համար,—չաճախ նաեւ
դոքա լոկ լուծարէնից արտագրւած
բառեր են, որոնց գրողը կամեցել է
պահպանել իրանց ծագումի չեչտը:
Եթէ բացի աղ մենք համեմատելու
լինինք պ. Կոնիբիրի արձանագրած
իրողութիւնը, թէ էջ 30 և թէ Պոր-
փուրի ներածութեան Դաւթի դրած

բացատրութեան վերջը, որ արտագրւած է Պաւլոսի ձեռագրի մէջ,— ուր ընդօրինակողը նոյն իսկ գրել է spiritus lenis նշանը ձաւնաւորով սկսւող հակական բառերից առաջ, ըստ լոնականի ¹⁾ մենք կը հասկանանք, թէ ինչ լեզւաբանական նշանակութիւն ունին այդ նշանները:

Անցնենք ալժամ ալս հակական հին վերսիւսների բովանդակութեանը: Պր. Կոնիքիը կարծում է թէ կարևոր ճանաչելու համար պէտք է, որ թարգմանութիւնը լինի. 1) հին, 2) բաւականին բառացի՝ լուծական բնագիրը դատելու համար, 3) զերծ աղաւաղութիւններից, որոնք տեղի են ունեցել շարադրութիւնից լետով: Անուանտեա նա վիճում է ստորագրութիւնների (կատեգորիաների) և մեկնութիւնների թարգմանութեան տարեմէսի մասին ոճի տեսակէտից, ընդօրինակողների իրանց ցոյց տւած ցուցմունքների, թէ հին հեղինակի վկայութիւնների և թէ պատմական աւանդութեան տեսակէտներից: Ոճը է հակական գրականութեան ոսկեալ դարինը, ալսինքն V-ինը, բայց թէ սա լոնարէնիցն է փոխադրւած հաւերէն բառերով: Մարդ իրան ակամալ հարցնում է՝ արդեօք սա մի տեսակի բանալի չէ նման Դիոնեսիոս Թրակացու քերականութեան հալ աշակերտների համար, որոնք բաւականի

զօրեղ չեն լոնական բնագիրը առանց ուրիշի օգնութեան կարգալու համար: Այս ենթադրութիւնը կը հաստատւէր այն իրողութեամբ, որ բոլոր հին հակական ձեռագրերում բնագիրը բաժանւած է երկու փոքրիկ մասերի, որոնցից ամեն մէկին հետեում է մի բացատրութիւն, որը շատ քիչ է զանազանւում բնագրի ոճից: Պր. Կոնիքիը կարծում է, որ ալս թարգմանութեան կազմութիւնը, նաև բացատրութիւնը, կարող է պատկանել Պրոքրեստոսի ժամանակին,— ծագումով մի հալի, որը ճարտասանութեան պրոֆեսոր էր Աթէնքում և որի կեանքը պատմւած է նրա աշակերտներից մէկի, Սոնապիոսի ձեռքով «Փիլիսոփաների և սոփիստների կեանքը» վերագրով զերքում: Հայր Սուքրիաս Պարոնեանը, Մանչեստրից, նկատում է, որ բացատրութեան մէջ Վարդանը փշուտ է իբրև քաջութեան մի տիպար,— արդ՝ Վարդանը ընկաւ պարսկների դէմ մղւած պատերազմում 451-ին, մի հանգամանք, որ չամենայն դէպս կարող է ապացուցանել թէրևս, որ բացաղրութեան տարեթիւը չի կարելի հինգերորդ դարու կիսից առաջ համարել և, եթէ բնագիրը ժամանակակից է եղել բացաղրութեան, նոյն ալս նկատողութիւնը կարելի էր վերաբերել նաև լոն բնագրի թարգմանութեանը:

Դաւով ալս վերսիւսների հեղինակին, արդէն նրանց բաւականին ուշ սկսեցին վերագրել Դաւիթ Անշաղթին, քանի որ հին ձեռագրերը բոլորովին փշատակութիւններ չեն պարունակում: Բացի դորանից, եթէ

¹⁾ Ձաւնաւորով սկսւող որ և է բառ. լոնարէնում չի գրւում առանց spiritus նշանի, որը կամ չի հնչւում, (spiritus lenis), կամ ունի հակական հ տառի հնչիւնը (spiritus asper): Մ. Խ.

մենք համեմատելու լինենք լուծական
ալն կոմենտարիան, որ լալտնի է
ἀπὸ φωνῆς Δαβὶδ անուանով (հատոր
IV Արխատոտէլի Բերլինեան հրա-
տարակութիւնից), մենք նրանով ոչ
մի կերպ չենք ճանաչիլ հակա-
կան բացատրութիւնները, Բացի
ալդ, տարօրինակ է, որ ոչ Ստե-
փանոս Սիւնեցի, ոչ Գրիգոր Մա-
գիստրոսը իրանց նամակներից մի-
նում, որոնց մասին խօսք կը լինի
լետոյ, խօսելով Դաւթի իբրեւ
«Ներածութեան» հեղինակի, ոչ
մի փշատակութիւն չեն անում ալս
գրածքների մասին, որոնք իբր թէ
դրա թարգմանութիւններն են: Պ.
Կոնիքիբը, հիմնւելով պ. Վալենտին
Խոդի կարծիքի վրայ, Ռոզի՝ որը հրա-
տարակեց 1887-ին «Կեանք Սուրբ
Դաւիթ Թեաղաշինկեցու», որ սուրբը՝
Թերեւս մի հալ Միջագետքից և
փիլիսոփան միևնույն անձնաւորու-
թիւնն են, մանաւանդ որ երկուսին
էլ վերագրում են բոլորովին նույնա-
նման անեկդոտներ: Յալտնի է, որ
ստացած ընդհանուր կարծիքը ալն
է որ Դաւիթ Անլաղթը ծնւել է Տու-
րուքերանի Ներգէն կամ Ներգին
գիւղում: Նա Մովսէս Խորենացու
հօրեղբորդին էր և որ նա ու-
սում առաւ Աթէնքում Սիրիա-
նուսի ձեռքի տակ, որ Պրոկղի վար-
ժապետն էր: Նշմանը հրատարակեց
մի փշատակարան ալդ փիլիսոփայի
և սորա գրածքների մասին Journal
Asiatique թերթում 1829 թ. և պ.
Բարթէլէմի Սէնտ-Զիլէրը դրա առի-
թով շատ օրինաւոր նկատողութիւն-
ներ արեց, որոնք մէջ են բերւած
«Նոր ընդհանուր կենսագ-

րութեան մէջ (Nouvelle Biogra-
phie générale) հատոր XIII (1857)
David de Nerken վերնագրով. Պ.
Կոնիքիբը մեզ տեղեկացնում է որ
Էջմիածնի գրադարանում կալ մի
գրածք՝ «Գիրք էակաց վերնա-
գրով, թարգմանած լուծարէնից
578-ին, որի օրիգինալ բնագիրը
Թերեւս գրւած լինի 580 թվի մո-
տերքը: Այդ գիրքը խօսում է Մով-
սէսի և Դաւթի հակահառութիւնների
մասին ընդգէմ հերեաիկոսների և
պատմում է ալս առիթով, որ Դաւիթ
Անլաղթը ալն հինգ հալ ուսանողնե-
րից էր, որոնք V-րդ դարու սկզբում
հրաւիրւեցան Կ. Պոլիս Կալար Թեո-
դոսիոսի կողմից, ալնտեղ լուծարէնը
սովորելու և Սուրբ Աստածաշունչը
հալբէն թարգմանելու համար: Այդ
երիտասարդները կոչւում էին՝ Մով-
սէս (քերականագէտ), Մամբէ, (փի-
լիսոփայ), Աբրահամ (հեռոր), Պո-
ղոս և Դաւիթ: Վերջինս ալնուհետեւ
կալսրի կողմից Նրեան ուղարկւեց,
ալնտեղ Գառնիլի ամբուլթիւնների
կառուցման վերալ հսկելու համար,
որի պաշարումը հաղորդում է Տա-
կիտոս: Պոլիս վերադառնալուց լետոյ՝
Դաւիթ թուլտութիւն խնդրեց
կալսրից Աթէնք գնալու և ուսանե-
լու համար, ուր նա ստացաւ փի-
լիսոփայութեան ամբիոնը: Նա մնաց
ալնտեղ երեսուն տարի, ինչպէս նաև
Մովսէսը: 431 թվին երկու փիլիսո-
փաները հերքեցին Նեստորին Նիկե-
ստում և կալսը նրանց լետ ուղար-
կեց Հալաստան պարզենքով հան-
դերձ: Դժբախտաբար հալոնիք վե-
րադառնալով նրանք ստիպւած էին
թագնւել, որովհետեւ պարսիկները

հալածում էին նրանց հայրենակիցներին: Մովսէսը ծագումով մուրացկանի հագուստով չէտ քաշւեց դաշտի գիւղերից մէկում, բայց նրա չորս ընկերները գնացին մինչև Սրեան, ուր նոքա ընդունւեցին գրկաբաց Մովսէսի աշակերտակիցներից մէկի կողմից, որը լեռով դառաւ հալոց կաթողիկոս: Ծպտեալ Մովսէսը ճանաչւեց և չը նալած իւր բողոքներին նրան արքեպիսկոպոս ձեռնադրեցին: Այդ ժամանակն էր, որ նա դրեց իւր պատմութիւնը, իւր քերականութիւնը և հոգևոր երգերի մի գիրք: *Մինչդեռ Դաւիթը իւր կողմից չօրինեց իւր Ներածութիւնն և բը. Prolegomena).*

Չը նալած անախրօնիզմներին՝ ալս պատմութիւնից երևում է որ հինգերորդ դարու սկզբում Աթէնքում կար Դաւիթ անունով մէկը՝ փիլիսոփայութեան պրոֆեսսոր և անհաւանական չէ, որ Արիստոտէլի և Պրոքիլիւրի լոյն կոմենտարիաները սրանք լինեն (ἀπὸ φωνῆς Δαβίδ). Այս ամենը աշնուամենաշնու չի պարզում ստորոգութիւնների և մեկնութիւնների բացատրութիւնները: Պ. Կոնիբերը նրանից տալիս է թարգմանաբար լոնարէն և անգլիէրեն կտորներ, լուսալով թէ լոնադէաներից մէկը կը կարողանալ նրանց մէջ լոնարէն օրիգինալի հետքեր գտնել, քանի որ ոճից չալտնի է, որ ալս բացատրութիւնները թարգմանաւած են եղել լոնարէնից: Ամենալն դէպքում նրա մէջ կալ մի բաւականի երկար նկատողութիւն, ուր թարգմանիչը օգտակար է համարում մեկնել լոնական

մի քանի դարձացքներ և ալս նկատողութիւնը պէտք է որ օրիգինալ լինի: Թերևս, ինչպէս որ կարծում է պ. Կոնիբերը կարելի լինէր վերագրել թէ թարգմանութիւնը և թէ բացատրութիւնները հէնց իրան Պրոքիլոսին, մանաւանդ որ մեզ չալտնի չէ նրա իսկական անունը: Կարող են շփոթած լինել Պրոքիլոսին չառաջաբանների և Պրոքիլւրի կոմենտարիաների հեղինակ Դաւիթի հետ, որը ապրում էր հարիւր տարով աւելի ուշ:

Ի մի դոմարելով պ. Կոնիբերի արած եզրակացութիւնները, տեսնում ենք որ ստորոգութիւնների և մեկնութիւնների հակերէն թարգմանութիւնը Դաւիթ Անյաղթինը չէ, բացատրութիւնը ժամանակակից է բնագրին, իսկ տարբերիչ թերևս լինի V դարու երկրորդ կէսը:

Գալով բոլոր հալ թարգմանութիւնների բաւացի ճշդութեան, դոքա բացի «չաղագս Ալխարի» թարգմանութեանը, ամենն էլ նոյնքան ստրկական են որքան և թրակացի Դիոնիսիոսի քերականութեան թարգմանութիւնը, որը հիմնովին ուսումնասիրւած է պրոֆ. Աղալբերտ Մերքսի (Merx) կողմից, հրատարակութիւն Գուստաւ Ուշլիս, Լալպցիդ, 1883: Նկատենք ալս առիթով որ ալս հալացրած լոյն բառերի մի մեծ քանակութիւնը աշնուհետև ընդունւեցին սովորական լեզւի մէջ, մի երևութ որ մենք գտնում ենք բոլոր քաղաքակիրթ լեզուներում օտար ծագումի բառերի նկատմամբ:

Իբրև սալացուց վերովշեալի մենք կարտագրենք ալստեղ ստորոգու-

թիւները առաջին հատածը ըստ Պաւլի հրատարակութեան: Մենք կը զննենք նաև բոլոր շնչոտերը:

«Հոմանոսնք ասին որոնց անանք միայն հատարակի խոյ ըստ անանոն, բան գոյացութեան. անդ Ո'րդան: Կենդանի և մարդն և գրեանին: Քանզի սոցա, անուն միայն հատարակի խոյ ըստ անանոն, բան գոյացութեան, անդ ¹⁾: Քանզի եթէ բացատրեսցէ ոք, զինչ է նոցա երկաքանչիւր ուրաք կենդանին գոյ լատուկ իւրաքանչիւր ումք. բան բացատրեսցէ»:

Յոնարէնը՝

Ὁμῶνομα λέγεται ὃν ὄνομα μόνον κοινόν, ὁ δὲ κατὰ τοῦνομα λόγος τῆς οὐσίας ἕτερος, οἷον ζῶον, ὃ τε ἀνθρωπος καὶ τὸ γεγραμμένον. Τοῦτων γὰρ ὄνομα μόνον κοινόν, ὁ δὲ κατὰ τοῦνομα λόγος τῆς οὐσίας ἕτερος. ἀνὰ τις ἀποδοῖ, εἰςαὶν αὐτῶν ἑκατέρω τὸ ζῶον εἶναι, ἴδιον ἑκατέρου λόγον ἀποδοῦσε.

Ինչ վերաբերում է բնագրի հաղադատութեանը (pureté), ևս արդէն մատնացող արի ալ գաղբիւրների վրա որոնելից քաղել է պ. Կոնիբերը և աւելորդ է աւելացնելը որ նա արել է ամեն ջանք կարելիին չափ հարադատ բնագրեր ձեռք բերելու համար, որքան ներում է հնազանդութեան (սլաւոգրաֆիա) ներկա վիճակը:

Ինչ մնում է խօսել միւս թարգմանութիւնների մասին, բացի ստո-

րագութիւններից և մեկնութիւններից:

«Յաղապս Աշխարհի և լաղապս առաքինութեանց», որոնք ձեռագրերի մեծամասնութեան մէջ կրում են ալ վերնագիրը «Արիստոտէլ իմաստունի նամակները՝ առ Ալեքսանդր կայսրը: «Նկարագրութիւն Աշխարհի և վասն առաքինութեանց» փշատակում են Գրիգոր Մաղիստորոսի մի նամակում ¹⁾ իւր՝ Վասիլ և Սղիշէ աշակերտներին գրած, որոնք ալ ժամանակ (ալիսնք XI դարու առաջին կիսում) Յունաստանում էին սովորում: Ոճը թերևս փնջնում է VIII կամ IX դարերը, իբրև տարեթիւ հալ վերսխաների:

Որովհետեւ ալ երկու գրածքները շատ էին տարածւած միջին դարերի գաղտնեւում—բնական է որ թէ լուծարէն բնագիրը և թէ հալբէն թարգմանութիւնը գրանից մեծ փոփոխութիւններ են կրել: Պ. Կոնիբերը նոյն խոյ վարանում էր տալ «Յաղապս Աշխարհի» վարիանտները Բերլինի լուծակն բնագրի հետ միասին, և իւր բաղադատութիւնը արդէն տալած էր (էջ 51—71), երբ նա գտաւ մի աւելի մաքուր թէև անկատար ձեռագիր, ալն է Էջմիածնի «Յաղապս Աշխարհի» (ՁՁ 2050 Կարենեանի ցուցակում, ՁՁ 2093 գրադարանի ցուցակում) թւագրւած Աղթամար, փրկչական թիւ 1223:

Պ. Կոնիբերը մի քանի բաներ

¹⁾ Երբեմն ալ երկու կէտերը գրւած են տողից վեր, — ալ ալն գէպքումն է լինում երբ պատշաճ աւելի երկար է լինում:

¹⁾ Ալ նամակը գտնւում է Միւսխեի գրադարանում:

է ուղղում էջ XXXIII և XXXIV,
շնորհիւ արս գիւտին:

Յաղաքս Առաքինութեանց (բաղ-
դատութիւն էջ 72 և 73) թարգման-
ւած է թւում նոյն ժամանակին ինչ
որ և բաղաքս Աշխարհի Պր. Կոնի-
բիրը ունէր սակայն վեհեակի հրա-
տարակութիւնը Կորինթի և ալլն
գրածքների մէջ (Սուրբ Ղազար
1833), որոնք նոյն ժամանակից են,
ինչ Պարիզի, էջմիածնի, Նրուսազէմի
ձեռագրերը, բայց 1892 թ.ի գար-
նան նա գտնում է Հռոմի վատի-
կանի գրադարանում Cod. Arm. III,
fol 456 verso a fol 461 recto, մի մա-
գաղաթեալ հիւանալի ձեռագիր XIII
դարու սկզբներին դատարկ տեղերով
ալն մասերի, որ ընդօրինակողը չէր
կարողացել կարդալ օրիգինալից:
Անուամենայնիւ ալլ գիւտը երեք
վրիպակ է ուղղել (XXXV) ³⁾ Պոր-
փիւրի բովանդակութիւնը պարու-
նակում է պ. Կոնիբիրի աշխատու-
թեան մէջ՝ էջ 76—88: Ստորագու-
թեանց ներածութիւնը տպւած է
վեհեակի բնագրում էջ 227—250
և հիմնւած է վեց ձեռագրերի վրայ,
որոնցից երկուսը (1319—1411 թա-
կաններին) տալիս են նաև Դաւթի
մեկնութիւնը, տպւած Մխիթա-
րեաների ձեռքով էջ 251—336:
Պաւլիպի օրինակը աւելի մաքուր է
մանաւանդ բացատրութեան մէջ,

³⁾ Յաղաքս Աշխարհի և Առաքի-
նութեանց գրածքները գտնւում են
Սուրբ Ղազարի հրատարակութեան
մէջ էջ 608—635, որոնք հիմնւած
են վեց ձեռագրերի վրայ, որոնցից
երեքը պատկանում են 1319—1411
1599 թթ. Կ.):

որը ալնուամենայնիւ անկատար է:
Պր. Կոնիբիրը բաղդատել է իւր աշ-
խատութիւնը XIV դարու թիֆլիսի
մի ձեռագրի հետ, նաև Պարիզի ձե-
ռագրի հետ (fonds arméniens 106),
էջմիածի մի ձեռագրի հետ և մի
օրինակի հետ, որ տպւած է 1793 թ.
Մաղրասում Սպահանի մի ձեռա-
գրից: Քանի որ Պաւլիպի ամբողջ
ձեռագիրը հիմնւած է մի վատ լու-
նարէն օրինակի վրայ, պ. Կոնիբիրը
հարկ չի դատել նրան տպել տալու:
Նա վերագրում է թարգմանութիւնը
VII-րդ դարուն, աւելացնելով, որ
բացատրութիւնը պէտք է ուսումնա-
սիրւի ալնալիսի մէկի ձեռքով, որի
նպատակը լինի տալ Պորփիւրի ներա-
ծութեան մի քննադատական հրատա-
րակութիւնը: Վերջապէս պ. Կոնիբիրը
շնորհակալութիւն է չափնում իւր
բարեկամներին: Օկսֆորդի պրոֆեսոր
Margoliouth'ին և Հալք Սուքիաս Պա-
րոնեանին, Մանչեսթրից, ալն օգնու-
թեան և քաջալերութեան համար,
որ նրանք ցոյց են տւել իրան,
Աւելորդ չէ նաև ալստեղ վիշել, որ
սա առաջին գիրքն է տպւած հա-
լերէն տառերով Clarendon'ի տպա-
րանում: Յուսանք, որ սա չի
լինելու վերջինը և որ մեծ համալ-
սարանի հեղինակները ալժմ
կը ճանաչեն հալ օրինակների կա-
րևորութիւնը, որը՝ պ. Նորայր Բիւ-
զանդացին, համաձայն մեզ գրած մի
նամակին, մտադիր է աւելի ևս
պարզ կացուցանել մի մօտադաշ
գրածքով:

Գ. Ա. ՇՈՒՈՒՄՅ,

Անդամ Լոնդոնի թագաւորական
Ասիական Ընկերութեան: